

РАСПИСКАНИЕ

Получено в редакцию 12 стр.
Служба 6
Учредитель 15
Печать 8

Учредитель 3
Служба 4.50

Учредитель 40
Служба 20
Печать 20

СЛАВЯНСКОЕ

ИЗДАНИЕ ПЕРВОЕ. ПУБЛИКАЦИЯ БИЗНЕСА

ВЪЗРАСТОВОГО ПОДЪЕМА БИЗНЕСА

Учредитель 12
Служба 6

Редакция на вѣстьяхъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Учредитель 15
Служба 8

Учредитель 40
Служба 20

СЛАВЯНСКОЕ ПЕРВОЕ ИЗДАНИЕ БИЗНЕСА

БИЗНЕСОВЕ

ЗУБНО-ТЕХНИЧЕСКАЯ

УПРАВЛЕНИЕ

(Средств напечатан в Варне)

Содержание

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Содержание

Содержание
Содержание

Table with 2 columns: Name and Amount. Includes items like 'Учредитель', 'Служба', 'Печать'.

Содержание
Содержание

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Содержание

Содержание

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

Вопросы...
Зубная техника...
Управление...

զատութեան Ս. Գործին համար, և հայկական քաջութիւնը անգամ մը եւս Գեղի ցոյց տալով ճարտար սպասաւորութեան վրայ, յարգանքի, փառքի պատկան շրջանակը ստեղծեց մեր անուան շուրջը:

Մեղի կը մնար, որ մեր կարգին, վեհանձնորդն ու ինչնաբերարք մեր պարտքը կատարել գիտնայինք հանդէպ Ձէյթոնցիին: Աւրախ ենք որ թէեւ ուշ, բայց վերջապէս կրցանք անդրադառնալ անոր վրայ: Հայութիւնը իր երախտագիտութեան ազնուութիւնը ցոյց տուած կըլլայ, երբ այսօր մեծ ոգեւորութիւնով մը, ամէն հայ կեդրոններու մէջ հանդանակութեան կը ձեռնարկէ ինչպատ Ձէյթոնցիին: Պէտք է կատարել զայն արդիւնաւորապէս, որուն պէտք է մասնակցին առհասարակ ամէն հայ, ու մասնաւորապէս՝ պահպանողական հայերը գէթ սրտի զոհունակութեան մը համար, քանի որ ձեռնարկը զուտ եւ զուտ եղբայրասիրական գործ մըն է:

Հպարտութեամբ կը յիշեմ հոս ժամանակին գերման մէկ պաշտօնակցիս խօսքը, որով հայերս սիրարու օգնելու, իրարու անձնուէր ըլլալու վստմ յատկութիւններով օժտուած գրեթէ միակցիկ կանուանէր: Ասիկա ճշմարիտ ըլլալ թէ ոչ, այժմէն իսկ վստահ ենք թէ՛ արտասահմանի հայ մամուլին կոչերը արձագանգէ արձագանգ պիտի հասնին մինչեւ այն մութ անկիւնները, ուր հայ սիրտ մը կը թրթռայ և որոնք արդիւնաւորապէս պիտի անդրադառնան:

Կը հաւատանք ասոր՝ կատարեալ հաւատքով, որովհետեւ այս նոր և առաջին գործ մը չէ հայութեան համար:

Մեղի համար, սակայն, ինչ որ երկբայելի է՝ այն ալ ճշգրտօրէն գիտնալն է թէ այս կոչերն ու գործերը արդեօք իրենց արձագանգն պիտի ունենան նաեւ Գանուբէն ասիական բնակող մեր հայրենակիցներու սրտերուն մէջ: արդեօք պիտի թրթռան սրտի խելերն այն հայերուն, որոնք կը բնակին տարիներէ, դարերէ ի վեր Տրմպոլիցայի, Բուսնայի եղբայրներուն, Բուսնայի ընդարձակ և բարեբեր դաշտերուն վրայ, առանց որ և է նեղութիւն մը տեսած ըլլալու կեանքի պատճառով և ինչքի պահովութեան, որոնցմէ զրկուած են, աւաղ, գարեբէ ի վեր իրենց հարսպատ աստիակայն եղբայրներ ու քոյրերը:

Հարկ է յիշեցնել Պուրբէշի, Թօքթանի, Կալացի, Թումանի, Եսալի, Պոթուշանի և ուրիշ քաղաքներու մեր բնիկ Բուսնահայ

և մեծահարուստ ազգակիցներուն, թէ այս քանիբարոք անգամն է որ լուսթեամբ կը պատասխանեն, չի լսել կը ձեռնարկեն բոլոր այն կոչերը, որոնք կը հասնին իրենց՝ հայկական զանազան կեդրոններէ արձակուած, և որոնք աւաղ, պարագայութեան մէջ կը կորսուին:

Եթէ ամբողջ հայութիւնը հանդէպ Ձէյթոնցիին չի կենտրոնացնուած ըլլալուն համար, մեր Բուսնահայ եղբայրները, իրերու ճշմարիտ հայր պատկանները և ո՛վ պիտէ, գուցէ Անիէն գալթոյ հայ ազնուականներու և իշխաններու զարմեր—կրկնապէս կարմրելու են, քանի որ ամօթի մէկէ աւելի առիթներ ընծայած են հանդէպ անպիտոյ հայութեան առ հասարակ և հանդէպ Ձէյթոնցի մասնաւորապէս:

Մտեն է՝ ուրեմն, որ մասնակցելով ինչպատ Ձէյթոնցիի եղած այս ազգային հանդանակութեան մեր բուսնահայ եղբայրները սրբին իրենց ճակատն անտարբերութեան յանցանքին այս արատը. ատեն է որ ընդհանուր հայութեան զգացումներու հասանքին իրենք ալ խառնուին, իրենց չէղք ընթացքը թողլով և ունենան հոն՝ այն մասնաւոր ու պատուաբեր սեղն ու զիրքը, զոր ունենալ պարտ էին մինչեւ ցարգ, և ունենալու են վերջապէս:

Գ. Կոնկիկեան
6 Մայիս, 1903
Գնեսթանցա

ՃԱՅԻՃԻՆ ՄԵՋ ՆԵՏՈՒԱԾ ԲԱՐԵՐԸ

Փարիզի Անահիտին վերջին թիւին մէջ Կոնկիկեան բառ մը բնութագրած է անոր Գնեսթանցեան խմբագրին կողմէ: Բայց մի՞ գառնէք յօդուածը իր խօսքէն, Պ. Չօպանեան 14 կրիս, այսինքն 28 սիւնակ գրած է կարենալ ըսելու համար իր «վերջին բառը»: Եւ հարցուցէ՛ք թէ ինչ է այդ 28 սիւնակներուն նիւթը. — պ. Չօպանեանին անհանդուրժելի սեւօր. ուրիշ ոչինչ:

Ես, իմ, ինձի, զիս, ինձուհի, ինձուով. — ահա ասիկ ինչ որ զըզուելիօրէն կերկնայ մէկ ծայրէն մի՞ օր այդ անտանելի ըլլալու շարք երկայն յօդուածին: Պ. Մխիթարի «վերջին խօսքէն», Հնչակեան անգանդազրդ պատակատուէն և Ամերիկայի խիզախ Հայրենիքին շնորհակցիչ հարուածներէն թուրք երկր են նորէն սա մեր պարոն Արշակին շիղերը: Այդ երկու յօդուածները — այսինքն Մխիթարին և Վոստանին յօդուածները — կըսէ իր «վերջին բառ մը» մէջ, կարծեն որ վերջին անգամ մը դուրս ելլեմ, կամ աւելի ճիշտ վար ինքեմ այս բարձրագէտ առանձնոցէն, ճահիճի

մէջ նետուած այդ երկու աղտոտ քարերուն մասին քանի մը անհրաժեշտ խօսքեր ըսելու համար:

Եւ դուք այդ տողերը կարդալով կը մտածէք. ուրեմն այդ ճահիճին մէկ մասն ալ ինքն է եղեր, քանի որ անոր մէջ նետուած քարերը կրցեր են հասած թիւններ ցայտեցնել Անա. հիւան ալ և քանի որ ինքն ալ կը խոստովանի թէ այդ քարերն իրեն ալ ուղղուած էին. այդ անծայրածիր հայրասրբին մէջ Մխիթարի ամբաստանութիւններ կուզէ վեր. Հընչակեան կուսակցութեան զէմ ընդհանրապէս «վահլ» ին զէմ մասնաւորապէս և քիչ մըն ալ ինձի զէմ:

Եւ իր վեհափառութեան զէմ ցոյց տրուած այս յանդգնութենէն կատարած Պ. Արշակի դուրս տուած է բոլոր այդ յիմարութիւնները: Սուտն ու կեղծքը, հակասութիւն ու խեղաթիւրուած այնքան առատ են հոն, այդ անխղճամիտ յօդուածին մէջ որ և թէ ուզուէր այդ բոլորը մէկիկ մէկիկ մասնանիշ ընել, հարկ պիտի ըլլար գոնէ 56 սիւնակ մը լեցնել, բան մը զոր սենք չենք ուզեր ընել և չըպիտի ալ ընենք:

Կայ կէտ մը սակայն, զոր անհարելի է կըլեցնել. Հայրենիքը կարգացող ամեն մարդ գիտէ որ Պ. Վոստանի սիրտ անվիճելի ճշմարտութիւն չընդունիր Արիւսթեանի ամբաստանութիւնները՝ ինչպէս կըսէ Պ. Արշակ ալ կը կասկածի միայն որ՝ զեղծութեան կան և կը պահանջէ որ փոխանակ Արիւսթեանի զխոսքն ինքուրքը քաշելով զայն լաւեցնելու, ամբաստանութիւնները քննուին և զեղծութեանը, եթէ կան, պատժուին:

Կերեւի թէ Պ. Արշակ իր քոյր փաստաբանական ներշնչումները ծծեր է Ամերիկայի սա աղտոտ «վայրենաց Չօյնէն», որո՛ւ ետին կըկտած կարգ մը տաղանդաւոր(՛) շղագարներ ալ ու ձախ իրենց կատարութեան թուտու որ լորձուքները ցայտեցնելու զբաղած են այս միտոցիս:

Անահիտին խմբագրը արդեօք ինչո՞վ ծառայած կըլլայ կոր իր ազգին գործիք ըլլալով այս մարդոց ձեռքը և հրահրելով հին ասիականութիւնները:

Մեղք որ Անահիտին ընտանիքէն՝ հոգի ունեցող սիրելու համար ծնած Արշակը ատելութեան գործիքը եղաւ երբեմն:

Մե՛ղք որ Պ. Արշակ Չօպանեան զնահատուած է — ինչպէս ինքը կըսէ — Անահիտը Թրանսիերէն, Մալարմէն, Բոլ Ստաններէն, Բիէն Գիւստաններէն, Պէրարներէն:

Փոխանակ միշտ սղեղեցկութեան աղբիւրներ բղեցնելու, հիացումի պատճառներ ստեղծելու, խաղաղապատութեան լոյսեր վառելու, անուշութեան պատկերներ գրուագելու, եղբայրութեան ու սիրոյ երգը հնչեցնելու... մե՛ղք որ շատ անգամներ ալ ազգութիւններու հետ համբուրեցաւ, զգուանքի պատճառներ ստեղծեց. խանդավառութեան լոյսեր մարեց, ազնուութեան պատկերներ և ատելութեան զաւկներուն խռպոտ շեփոքը հնչեցուց...:

Սակայն կերեւի ինչ Պ. Մխիթարին «վերջին խօսքը» արդէն սկսէր էր ունենալ իր փրկարար ազդեցութիւնը՝ զօրեղապէս հնչելով Պ. Չօպանեանը. «ասի արդէն շատ ու ժեղ հարուած մըն էր իմ յոյժի տրուած, յոյս սակայն աւելի սեփեղ էր քան հարուածը. չը-

կործանեցաւ:

Բայց այնքան ալ անխորտակելի չէ եղեր իր յոյսը: Անիկայ հիմայ կը քայտի կոր հրապարակէն՝ մտնելու համար «վերստին, վերջնապէս իր աշխատանքը ուր իրեն կապասեն եղեր բեղուն ու սիրուն գործեր: Կերեւի թէ իր սեփեղ յոյսը որ Պ. Մխիթարին «խօսքէն» ետքը սկսեց էր քայքայուիլ արդէն՝ վերջնապէս վերջուր է Հնչակեան պատակտու մին հարուածէն: Ինքն իր բերնովը կըսէ սփեկայ:

«Իմ խեղճ աղւոր երազի տրուած այս անեղ հարուածը ամենախորին տխրութիւն մը, զգուանք մը և վհատութիւն մը բերաւ վրաս»:

Յոյսը չէ կործանուելու անհետ վհատութիւն եկեր է վրան՝ ասանց որին հաւատալու է:

Բայց չեմք իրականացած ըլլալ իր երկիւղը սորոշելի նոյն իսկ այլևս չկարողալ կարող մը հայրենի թերթեր, որոնց բնութեցումը կարող էր վերջ ի վերջոյ պարզապէս ջղային հիւանդութեանց ատաշտորակ զլաւ»:

Վախ վախ, կերեւի թէ նորէն կարգացեր է հայրենի թերթեր, մասնաւոր Մխիթարին և Վոստանի յօդուածները, ճ. հիճին մէջ նետուած քարերը:

Պ. Արշակը, որ միշտ արիւթ թիւնը ունեցած է իր երկնուան սկզբուքները սխալ հոչակելու այսօր — եւ հասանքէն այսօրուան սկզբուքներն ալ իրաւ պիտի հոչակէ վաղը — իր «վերջին բառ մը» ին մէջնալ կերպով մը կը խոստովանի թէ յեղափոխութեան մարդը չէ ինքը և թէ իր խոսնուածքին ամենէն քիչ յարմարն է անիկայն:

«Ատենը եկած կը համարիմ, կըսէ, արեւուն դառնալու եւ հոն մնալու: Հապա մինչեւ հիմա խեղք սուր էր, այժմ ալ»:

Ինչո՞ւ մտիկ չըրիր դեռ հինգ տարի անալ Շարժումը՝ զեղի տրուած սա աղւոր խրատը, «վազ անցի՛ր, մանչս սա գիւտանակալական, յեղափոխական գործերէն, քո խառնուած ինչ յարմար բաներ չեն անոնք»: Դո՛ւն, եթէ կու գես օգտակար ըլլալ ազգիդ, քու գրականութեանդ սանձաններն մէջը մնացի՛ր»:

«Անահիտին ատաշտութիւնն մէջն իսկ կըսէ իր թէ. «մտրդ պէտք է իր անձը ճանչնայ, Բայց մեղք որ դուն չճանչնար քու անձը»:

Գրիչ-Բրիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԱԿԵՒՈՒ ԻՌՑ ՀԱՄԱՐ

Մայիս 7ին Հուլիսի Մամուլի ընկերակցութեան սրահին մէջ անդի ունեցած է ինչպատ Հայկական և Մակեդոնական խնդիրներուն կարեւոր հատուած մը: Քաղաքական եւ մտաւոր աշխարհի պատկանող երկու հարիւրէ աւելի անձնաւորութիւններ որ հին մէջ հատուած էին բրոքէսօր Սէրճիի առաջնորդութեամբ եւ ի ներկայութեան իտալացի երեսփոխաններու:

Ժողովը բացուած է Անտոյ Ցրբանի հօր մէկ բանախօսութեամբ, որով հնչակուոր Ֆրանսայի գրագէտը եւ մարդասէր Լոյզուէր Իտալիան իր հոյակապ հոսթիան, իր համակրելի վերածնութեան եւ փառաւոր ազատագրութեան մէջ, Յիտոյ խօսելով թուրքերոյ քրիստոնեայ ժողովուրդներուն, նահատակ Հոյաստանի

Եւ թղթաւած Մակեդոնիայի վրայ, քաղաքակիրթ Եւրոպային բարոյական միութիւնը հրաւիրեց զէպի այդ տառապեալները:

Յետոյ ներկայացուց ժողովին օրումն ասեալներն: Երօթէօր Սէրմին հայազգի Տօքթօր Լօրիս Մէլքթօֆ եւ Մակեդոնացի Բառնօք:

Նոյն հաւաքման մէջ փոսած են նաեւ եւ իտալացի երեսփոխաններ եւ կղերականներ: Ժողովը հետեւեալ բանաձեւը քուէարկած է.

«Կարոտյալստեք մեր իղձը որ իտալական կառավարութիւնը եւրոպական միւս անբուժեանց արկղացութեամբ դործադրութեան դնէ Պերլինի պաշտօնակիր տարաբախտ ազգերու վերաբերեալ յօդուածները եւ այն սպառնալից տարաբախտ ազգերու վերաբերեալ յօդուածները եւ այն սպառնալից տարաբախտ ազգերու վերաբերեալ յօդուածները: Եւ որոնք խաղաղութեան երաշխիք մը պիտի ըլլան:»

Ժողովը որոշեց որ Բրօք Սէրմին նախագահութեամբ կազմուի յանձնախումբը: Զուգահեռ մէջ մեծ միջոցով մը կազմէ, ինչպէս ետեւ Միջազգային խաղաղութեան Կոնֆերանսի մէջ իտալիոս Եւրոպայի քաղաքներու մէջ ալ նմանօրինակ ժողովներ ու միջոցառումներ տեղի ունեցեր են, մասնակցութեամբ Քիլոսի Լամպրօզօ գիտնականի եւ որիչ երեւելի անձանց:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

1903 Ապր. 12, Սալուսուս Հափրլան

Տարիներէց ի վեր Սալուսուսում կարիք էր զգացուում մի աջակցող եւ ետանդուն հովի (փոխ-առաջնորդ) գրա համար էլ մեր ժողովուրդը ուղղակի եւ անուղղակի կերպով դիմեց էջմիածին Վերջապէս անհամար դիմումները եւ թախանձանքները կարծես ազդեցին էջմիածնայ միաբանութեան վրայ, որ ուղարկեց իր միաբաններէց Ախրքալակի գործակալ Հ. Ընձակ վարդապետին, Կովկասի թերթերին նայած այդ դառաւոր ժողովուրդը շատ է սիրելիս եղել ու համակրել սրան, թէ իւր ոգեկոյն քարոզները համար եւ թէ ետանդուն եւ օգտակար գործունէութեան համար, Հինգչարթի, (մարտ 27ին) Սալուսուսի հայ ժողովուրդի դիմաւորութեամբ Հ. Ընձակը ժամանեց-մեր քաւառը, իսկ կիրակի (մարտ 3) փառաւոր ընդունելութիւնն զտաւ Հափթի վրայ գլխավոր եւ վերջնականապէս հաստատուեցաւ յաջորդարանում, որ գտնուում է եկեղեցու գաւթում:

Յաջորդի ներկայութիւնը Սալուսուսի հայերի համար փրկարար ազդեցութիւն ունեցաւ. ահա՛ թէ ինչպէս, Սալուսուսի գլխավոր (90 տուն հայ) գիշորով անյայտ չարագործներ յարձակուում են մի երկտասարդի տան վրայ, երկտասարդը իմանում է իւր պաշարուիլը եւ ձայն է բարձրացունում, ձայնի ուղղութեամբ գնդակներ են գալիս եւ սպանում երկտասարդի մանկամարդ կնոջը, զրանից յետոյ չարագործները անհետանում են: Կարծում է սպանողները շայնակցութիւնից վտանգուած երկու հինգ զինուորներ են, որոնք նախօրոք սպանալիք էին կարգացել այդ երկտասարդի վերայ եւ թշնամութիւն ունէին, որովհետեւ զողացած զէնքի հարց կար մէջանել:

Եթէ յայտնի այստեղ չլինէ հաստատուած ենք, որ Սալուսուսից

միևիմիւր 50 թիւման կը պոկէր Սարփարատը. բայց յաջորդի շնորհիւ մինչև այժմ ոչինչ չկարողացել զուրս քաշել:

Երկրորդ սպանութեամբ Մալուսում եղաւ Զատիկի հետեւեալ օրը—գերից մանօրեանքին: Սպանողը Դաշնակցութեան նախկին զինուորներէն էր, որ մասնակցել էր արշաւանքին: Սարկինելով փչացած շրջանում եւ վատ կտրանց ճանկը, փրչին մի քանի տարայ ընթացքում սարսափելի ոճիրներ էր գործում: Դաշնակցութիւնը քանիցս զոչուցարեց, պատժեց, արտաքսեց եւ վերջապէս տէտօրի ենթարկեց, ազատելու համար հայ ժողովուրդը նրա գազանութիւններէն: Որչափ էլ Դարձօն ըսպանող մեղադրելի լինէր, այնուամենայնիւ նա Սալուսուսի փչացած ու բարոյապէս ընկած ժողովուրդի արգասիքն էր: Մահաւայտիք անխոնձարար սուսեցին 64 թիւման, թէպէտ եւ կարող էին մի փոքրիկ գումարով ազատուիլ:

Երրորդ սպանութեան փորձը Սալուսուսում էր, էլի նոյն օրը. Խիոյը նոյն զիւղի գլխարկան էր, մի գիծ տղայ, սա բարկացել էր մի ուրիշ վերայ եւ ուղղում էր դաշնակց սպանել գործողարար հարածը պատահամբ դիպել էր միջամտողին, որ եւ այժմ հիւանդ պատկած է: Վէրքը յոսատու է: Այստեղից էլ, Յաջորդի շնորհիւ ոչ մի կողակ չի կարողացել զուրս պոկել Սարփարատը, որ առաջ կարող էր 60-70 թիւման առնել: Պէտք է խոստովանել, որ Հ. Ընձակը յուսալից ապագայ է խոստանում: Յանկանում ենք յաջողութիւն եւ յարատեւութիւն իւր սկսած ծանր գործին մէջ:

Սալուսուսի ճոյակ

ԳԵՂՈՒՆԻ

Անուան իսկապէս համապատասխանող պատկերազարդ մեծադիր թերթը լոյս տեսաւ: Կը բաղկանայ փառասեղ փայլուն թղթի վրայ տպուած 40 միծաղիր քառածալ թերթերէ, գեղեցիկ, ինը զոյնով կողքի մը մէջ կազմուած: Բազմաթիւ ազգային կեանքէ առնուած նորանոր պատկերներէ զատ, Գեղունին ըզրգարուած է նաեւ եօթը հատ քաղմագունի պատկերներով, որոնց մէջ յատուկ ուշ կը գրաւէ Աւարայրի դիւցազներու խումբանը կարն: Մենք ներկայ ազգովս չենք ուզեր և ոչ իսկ կարող ենք այս նոր Գեղունին նկարագիրը և մատենախօսականն ընել թէ զրական և թէ գեղարեեստական տեսակետով: Այդ թողովը ուրիշներու, միւսին այս կ'ըսենք, որ ինչպէս պատկերներու, եռնպէս և յօդուածներու յատուկ ընտրութիւն եղած է: Այս Գեղունին ամենայն կերպով կը գերազանցեցար լոյս տեսանները, և յիշատի կրնայ կանգնել իբր գրական և գեղարեեստական թանկագին կոթող մը հայ գրականութեան մէջ:

Գեղունին Կ'ԱՐԺԷ ՄԻԱՅՆ 10 ՅԲ. ԿԱՄ 4 ԲՈՒՐԼԻ

Գեղունին ամեն կողմ տարածելու համար, վիճակահանութեան կը դրնենք մեր տպարանէն լոյս տեսած յարց մը արժէքաւոր գրքեր: Տասը օրինակ մէկ անգամէն գնողները այդ

վիճակահանութեան մէկ թիւ կ'ունենան, քան օրինակ գնողները երկու, և այլն:

Գեղունին կը զրկուի յատուկ դրամով ապահովագրեալ, քաղմաթիւ օրինակները կը զրկուին արկղերով: Որոնք որ մեզ հետ յատուկ հաշիւ չունին, պէտք են զրամը կանխիկ զրկել: Գեղունին ստանալու համար պէտք է զիմել հետեւեալ հասցէին:

Էլրիտիկոնի Արմէնիկ
Ս. Լազար Վեցնէիկ (Իսալիս)

Խմբագրութիւն «Շարժում» լրագրոյ Վառնա

Խմբագիր՝ Ընդ գրոյս կցեալ հաշիւը հաճեցէք հրատարակել ձեր պատ. լրագրոյն էջերէն միոյն մէջ, որոյ համար կանխաւ կը մատուցանենք մեր շնորհակալիքը:

Մնա՛մ յարգանք լուծեալ Որբանում յանձնաժողովոյ անդամք Եր. Յակոբեան 7 Մայիս 1903 Բուսճուք

ՀԱՇՈՒՆԵՇԻՒՆ
Որբանում Յանձնաժողովոյ Սկսեալ 1900 Արիւնքեր 48 ցվերը 1901 յուլիս 22

ՄՈՒՏԲ

Բաժնեգիններէ հասոյթ	463.80
Նուէրներէ	37.40
	500.70

ՆԼԲ

Ազգ. Պատրիարքարան	զրկուած
18 օսմ. ոսկի	464.30
Տպագրութեան ծախք	6.50
Պատրաստ գրամ(ը)	29.90
	500.70

Լուծեալ Որբ. Յանձնաժողով 7 Մայիս 1903 Բուսճուք
(*) Սոյն գումարն եւս զրկուեցաւ Ազգ. Պատրիարքարան:

Էլրի-Չալարտ 40 Մայիս 1903
Առ պատ. Խմբագրութիւն «Շարժում» հայաթերթի Վառնա

Տէր Ասկից առաջ «Վ. Բօլթայ» թիւ 638ի մէջ հայ յեղափոխութեան նըկատմամբ երեւցած աննպաստ յոդուածը, թէ տեղոյս հայութիւնը եւ թէ պուլկար հասարակութիւնը զըզուանքով կարողաց եւ իւր այս արդար զայրոյթը յայտնելու համար արդէն կը պատրաստուէր, բայց ահա ձեր պատ. թերթի թ. 513 թուով վերոյիշեալ թերթի խմբագրականին ի պատասխան գրուած յօդուածը, եկաւ գոհացնել մեր եւ պուլկար հասարակութեան քաղձանքը, յաջողութեամբ պատասխանելով այդ վատագի գրուածքին. առ այս ի դիմաց տեղոյս հայութեան իմ խորին շնոր-

հակութիւնս կը յայտնեմ. եւ կը խնդրեմ սոյն գրութիւնս ձեր պատ. թերթին մէջ հրատարակել:

Յարգանք Յովակիմ Աերոբեան

Փ Ո Ւ Ր Թ Ղ Թ Ա Տ Ա Ր

այիս 11 Սօփիս

Ամսոյս 5ին տեղս ժամանեց Պուլկարիոյ պատրարքական փոխանորդ(ը) Գեր. Վահան վար. Յակոբեան և կիրակի ալ օր. պատարագ մատուց ու քարոյ խօսեցաւ: Ինչպէս կը տեսնենք պերճախօս և բարի արամադրութիւններով մէկնէ:

Կը յուսանք որ հայր սբ.ը իր նախորդներու լծողուցած գէշ տպաւորութիւնը պիտի կարողանա ջնջել մեր սրտերէն, բան մը որ այնքան տաղտուկ պատճառեց թէ ժողովրդին և թէ հայ մամուլին: Բայց թէ պիտի կարենա՞յ ժողովուրդի համակրութիւնը չահլիատիկայ պիտի պարզէ ապագան կսպասենք:

Կըսեն քէ ջանքեր կընէ քաղաքս մնայուն առաջնորդարան մը և գաւառական ժողով մը հաստատելու համար, խիստ գովելի ձեռնարկ, կարողութիւն կը մաղթենք:

Նոյրպէս ամսոյս 7ին տեղս հասաւ «Վեպէյօ» հայ դերսուանական խումբը և 9ին սկսաւ իր ներկայացումները տալ:

Հրակոյ

Յ. Գ. Անգամմը ևս կը յիշեցունենք մեր պատ. թաղական խորհուրդին թէ օրօրուելու ժամանակ կը չէ, եթէ չենք ուզեր որ մեր պարծանքը եղող Չէյվուցին անօգնական մնայ, պէտք է անմիջապէս ձեռնարկել հանդանակութեան մը, հակառակ պարագային իրաւունք պիտի ունենան մեր երեսին ըսելու անխիղճներ ու ապերախսներն:

Նոյն

ԵՐԻՏ ՍԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆ

Ամերիկայի Պոսթօն քաղաքին մէջ Մայիս 6էն ի վեր սկսեր է հրատարակուիլ «Երիտասարդ Հայաստան» անուն շաբաթաթերթ մը:

Երիտասարդ Հայաստանը՝ ինչպէս կերեւի իբր ժողովանդակութեան Ամերիկայի Հին—Հընչականներուն մէկ հրատարակութիւնն է:

Իր ծրագրին վրայ զազաւտար մը տուած ըլլալու համար բաւական է վարի քանի մը տողերը տրտատպել:

«Որովհետեւ տմեն սզգ մարդկայնութեան մէկ անգամը լինելով, կատարեան հրատարակուի ազատ լինել, իր անկախ հայ»

բնիքը սենեակը և իր բոխարը
իր ձեռքով տնօրինել, զնգծ որ
և է կաշկանդումը, ուստի
«Ներխուսարդ Հայաստանն էլ
միևնոյն արդար անձեռնմխելի
իրաւունքն է պահանջում իր ազ-
գի, իր երկրի համար, մի իրա-
ւունք, սակայն, որ սրբագործել
և ճանաչել է Նորոպական քաղա-
քակրթութիւնը, մարդկային
յուսալագիմութիւնը, ժամանակա-
կից գիտութիւնը: — Ահա այն
սկզբունքը, որ «Ներխուսարդ Հա-
յաստանի անմիջական, մտակայ
պահանջն է:

ՇԱՀԷՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՆԸ

Ասկէ ուսչ ֆոթիէն արտա-
սահմանի հայ թերթերուն հա-
ղորդուած լուր մը կրմացուներ
հնչակեան գործիչ Միսո (Շահէն)
Սէֆէրեանի սպանութիւնը:
— Մենք այս մասին բան մը չը-
գրեցինք, որովհետեւ սրուած
լուրերը հակասական էին և մե-
զի համար մութ կը մնար բուն
իրողութիւնը:

Այս անգամ Ամերիկայի նոր —
հնչակեաններուն Ձայն Հայրեն-
եացի վերջին թիւին մէջ կը
գտնենք սպանուած Շահէնի
պատկերը սև շրջանակներով և
քոթի ալ «հանելի» դամբանա-
կանով մը, որունմէջ թերթին
խկրագիրները կըսեն թէ չեն
կրնար արտայայտել իրենց ներ-
սիգին պոռթկացող անսահման
զայրոյթը, կատաղութիւնը մո-
լեգունութիւնը, ունալու փափա-
քը՝ Նորայրասպոն ձիւղներուն
Նորայրասպան սողուններուն հրա-
մանոթի ու սև միջնայութեամբը
ու սև վատութեամբը սպանուած
Միսոին գիւղին առջև, Ու կա-
ւելցնեն թէ անոնց բռնկած հո-
գիներուն վրայ արցունքը իր
անգործիչ տնձրեւը թափելէն
եաքը՝ իրենց Յաւր տեղի պիտի
տայ վրէժին:

Միս կողմէն սակայն Ամերի-
կայի Հին — Հնչակեաններուն
նորածին «Ներխուսարդ Հայաս-
տանին» մէջ կը գտնենք սա-
երկտողը՝ «վերակազ, հերձուածի
զեկավարիչների մութ հաշիւ-
ներու զոհ՝ Շահէնի (Միսո) սպան-
ման մասին յայտարարումը»:
Իսկուն իրողութիւնը մեզի հա-
մար կը շարունակէ մնալ մութ,
շատ մութ:

ՆՊԱԿԱՏՈՒԹ

ՉԵՅՈՒՆԻ ՀԱՄԱՐ Վանայի պա-
տանիներուն մէջ կատարուած հան-
գանակութենէն գոյացած է 75 ֆր-
նէ դումարը յանձնուած տեղւոյս
Պատ. թաղական խորհուրդին և իսկ
նուիրատուներուն ցանկը, որ յանձ-
նուած է մեզ, կը հրատարակենք:

«Շարժում» յառաջիկայ թիւերէն
մէկուն մէջ:

Քոնստանդուպոլիս. — Պ. Ս. Տ. Գրիգոր-
եան. — Ստացանք ձեր խրկած 8 ֆր-
նէ:

Սալուս. — Պ. Տոլուկ. Ապրիլ 13
թուակիր ձեր նամակին Յ. Կ. ՉԸ
հասկցանք. Հաճեցէք գրել թէ ինչ
ընել կուզէք:

Պ. Հանդիսանես. — Ձեր յոգուածը
կը հրատարակուի. նիւթերու առա-
տութեան պատճառով ստիպուեցանք
ուշացնել:

Ռուսմոլ. — Պ. Մ. Ս. — Ստա-
ցանք ձեր յոգուածը բայց չենք հը-
րատարակել զայն՝ որովհետեւ չէք
զրկած ձեր ամբողջ ստորագրութիւնը,
որպէսզի գոնէ խմբագրութիւնս գիտ-
նայ թէ ո՞վ է Մ. Ս. ստորագրող
անձը:

Սօֆիա. — Պ. Մատթ. Յակոբեան:
— Ստացանք. բայց ձեր յայտարա-
րութիւն չենք տպագրեր:

ՀՐԱՆԱԼԻ ՍՐԻՒՆԷՐ

ՄԱՁԻ ՆԵՐԿ

Ա. Ն. Մ. Ա. Ն.

Կը մըքի հերոսական առաջնա-
կարգ ներկերու հետ:
Ազգացութիւնը վարկենական, և
բողոքովն անվրաս:
Մէկ ամսէն աւելի կը տեսէ:
Ձեռք կը բերուի բնական սեւ
գոյն, նոյնպէս շագանակագոյն, բայց
գործածութեան:
Դիմել Վանա՝ Ջարպտեղեանի
կամ Պրք. Միհրան եւ Հրանդի:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Եւզոկիայէն Պոլսոյ Մանչուսէի
Էֆքեար թերթին պրուած նա-
մակ մը կը պատմէ թէ խաշնա-
րած մը քանի մը շաբաթ առաջ
քաղաքին մօտիկ ապուռածուտ
լեռան մը ստորուը ոչխարներու
մակատեղի մը շինելու համար
պէշած առեն՝ հին հայ տաճարի
մը քարակիր շինուածքին լայն
և անապուռ պատերը հրեան ե-
լեր են: Տեղական կառավարու-
թիւնը պիտի մը դադրեցունելով
պոլիս տնօրէնագրեր է հրահանքի
համար:
— Կիլիկիայ նորընտիր կաթո-
ղիկոսը երկու ամիսի շափ կա-
թողիկոսութեան վերաբերեալ
անմիջական գործերը կարգադ-

րելէ ետքը միայն պիտի երթայ
հզեր Պոլիս՝ Սուլթանին ներկա-
յանալու համար:

— Սալագիբրտի մէջ պատա-
հած երկրաշարժի մասին հասած
նորագոյն լուրերու նայելով 430
հայերու սուներ կործանած, 733
հոգի փրատակներուն տակ մնա-
լով մեռած, շատ մը արջառնեք
սպաննուած և ապուռած և երկ-
րաշարժական միջոցներէ շըր-
կուած ժողովուրդը ենթարկուած
է վերջին ծայր թշուառու
թեան:

— Ուրախութեամբ կը կար-
գանք «Բազմալիպի մէջ թէ
կարգ մը «չօվէններու» «Բազմա-
վէպի» խմբագրութեան գէժ՝ Ը-
րուծ յարձակումները՝ հայ գոր-
ծիչներու պատկերներու հրա-
տարակութեան մասին, բարոս-
վին անհիմն են, որովհետեւ
«Բազմալիպի» յարգելի խմբագ-
րութիւնը երբէք պատուաւանա-
տու չկրնար ըլլար յիշեալ պատ-
կերներու սպագրութեան մասին
քանի որ տնտէք Սիմոն Նահա-
պետեան անուէ անձի մը հրատա-
րակութիւններն են:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ի Ս

Ալպանացիները պաշարած են
Իբէքի մօտ սերպիական վանք
մը ուր հարիւր վանականներ կը
բնակին. վանքը ազատելու հա-
մար զրկուած զօրքերը սփա-
ռուել են եւս քաշուել, որովհե-
տեւ Ալպանացիք սպառնացեր
են վանքը օգը հանել:

— Դանլը-Դալէի մէջ բանտար-
կուած պուլիար վաճառական մը
վար նետուել է աշտարակէն.
կըսուի թէ իր բանտի ընկերները
գիտումմը զինքը դուրս նետեր
են որպէսզի մեռնի և ուէ գաղա-
նիք դուրս չի տայ, որովհետեւ
վերջերս շատ թուլացած է եղեր:
— Սէլանիկի վերջին գէպքե-
րու առեն՝ Սարաֆօլ Սէլանիկ
տան մը մէջ պահուած է եղեր
ոստիկանութիւնը լմացեր ու պա-
շարեր է տուել, բայց Սարա-
ֆօլը ձերբակալուած չէ, որով-
հետեւ թուրքերը արգէն ուշ մը-
նացեր են:

ՉԻՆԱՍՏԱՆ

Բէքինէն կը հեռագրեն թէ
Իու. Նան գաւառին մէջ արքա-
յական ընտանիքին գէժ ապրս-
տաւրութիւն մը ծագեր է և Լինկ
անֆու քաղաքը ապստամբներէն
պաշարուելու գրաւուել է իսկ
նահանգապետն ալ սպանուել է:

ՊԱՏԵՐԻՆԻ ԳՐԱՅԷՆ — ԵՐԳՈՐԱՆ

Լոյս տեսաւ «Վազգէն»-երգարանը,
բանաստեղծութիւններու, ազգային
յեզոփոխական, սիրային և ժողովր-
գական երգերու ճոխ հաւաքածուն,
որուն անհամբեր կ'սպասէր ընթեր-
ցատէր հոյ հասարակութիւնը:

600 մեծագիր երեսներէ բաղկացած,
ընտիր թուղթի վրայ, հեղեցիկ
պատկերներով զարդարուն, սոյն եր-
գարանը մեծ պակաս մը կուգայ
լրացնելու մեր աղքատիկ գրականու-
թեան մէջ:

Գինն է, ճամբու ծախքով 1. 50
Գինը փափագողները դիմելու են
Ք. Հորանեան 379 Բ. Օ. Պոֆս, Լին
Մաս. (Ի. Ս. Ա.)

Ձեռքէ կը ծախուի նաեւ Հայրենիքի
տպարանին մէջ

Հայրենիք Բուլ. Բո.

61 հասկ Ս. Պոսթոլ Մաս. (Ի. Ս. Ա.
Արտասահմանի համար 5 ֆրանք
Պարսկաստանի համար 4 ֆրանք

Մանօթ. — Սոյն երգարանը որչափ
որ քանի մը անձերու անհատական
յանքերով հրատարակ ելած է, սա-
կայն ամբողջ հաստիքը յատկացուած
է զուտ բարեսիրական գործի մը
ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ

ԱԶԴ

Մեր բոլոր այն բաժանորդները,
որոնք դեռ չեն վճարած իրենց բաժ-
նեկիները, թող հաճին անյապաղ
մեզ հասցնել զանոնք: Կը յիշեցնենք
իրենց թէ մեր բոլոր ծախքերը կան-
խիկ ըլլալով չենք կրնար թերիչ
ապուրիկ ծախել:
Խ Քրպր.

ԻՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԻՔԸ

Կրեց անգլիացի Ուրլիւմ Ուօթարի
բանաստեղծ և հայերէնի թարգմա-
նեց Ասորով. կը ծախուի յիսուն
սանթիմի դիմել թարգմանիչն՝
Մ. ՍՐՄԷՆ ԱՐՏՈՆԸ
43 Տուկլու Բօ 5
Մհարօն (Անկղղիթ)
Եւ կամ Ռուրիկ Գաւազանսիանի
Վ. Ունա

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатня „Взаимность“ Варна